ԱՌԱԿՆԵՐ



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875–1957)

Հայ արձակագիր, բանաստեղծ, հեքիաթագիր և հասարակական գործիչ: Ծնվել է Ալեքսանդրապոլում: Մանկությունն ու պատանեկությունն անցել է Ղազարապատ գյուղում: Խաղացել է Արագածի փեշերին՝ հայրական ջրաղացի շուրջ: Սիրել է թափառական աշուղներին, լսել նրանց երգերը: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այնուհետև ընդունվել Լայպցիգի համալսարան որպես ազատ ունկնդիր: Երկար ժամանակ ապրել է արտասահմանում: Գրել է արձակ և չափածո ստեղծագործություններ: Նրա առակներն աչքի են ընկնում իրենց բանաստեղծական կուռ կառուցվածքով և այլաբանական խոր հիմքով: